



## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

« 15 » Տեպր 2022թ.

### ՀՐԱՄԱՆ N 98-ՂԻ

«ՎԻՉ ԷՅՐ ԱՐՈՒ ԴԱՔԻ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴԿԱԾԻ 1 ԻՆ ՄԱՍԻ «2» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով, «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով «Վիզ Էյր Արու-Դաքի» ավիաընկերության 2022 թվականի փետրվարի 15-ի հայտը.

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Վիզ Էյր Արու Դաքի» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Արու Դաքի/OMAA/-Երևան/UDYZ/-Արու Դաքի/OMAA/ երթուղով՝ 2022 թվականի մարտի 28-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 29-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Նկատի ունենալով, որ Ընկերությունը օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ամառային ժամանակահատվածում 2022 թվականի մարտի 28-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 29-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Աբու Դաբի/OMAA/-Երևան/UDYZ/-Աբու Դաբի/OMAA/ երթուղով Հայաստանի Հանրապետություն տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթերի հաճախականությունների պահանջներին, հետևաբար սույն կետում նշված ուղղությամբ մեկնող ուղևորների վրա տարածվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի «զ» ենթակետով սահմանված արտոնությունը:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

3/15/2022

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 011/2022  
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ  
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 011/2022  
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR  
SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավշահագործողը  
Aircraft Operator

«Վիզզ Էյյր Աբու-Դաբի» ՍՊԸ  
"Wizz Air Abu Dhabi" LLC

Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը)  
Type(s) of aircraft(s)

A321

Հաճախականությունը  
Frequency

շաբաթական 2 չվերթ  
2 flights per week


Երթուղին  
Air route

Աբու-Դաբի/OMAA/-Երևան/UDYZ/-Աբու-Դաբի/OMAA/  
Abu Dhabi/OMAA/-Yerevan/UDYZ/-Abu Dhabi/OMAA/

Թույլտվության գործողության ժամկետը  
Permission validity

28/03/2022 մինչև 29/10/2022  
28/03/2022 till 29/10/2022

ՔԱՂԱՔԱՏԻԱԿԱՆ  
ԱՎԻԱՏԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱՀԻ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿԱՏԱՐՈՂ  
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ  
ACTING CHAIR OF  
CIVIL AVIATION COMMITTEE  
MIHRAN KHACHATRYAN

3/15/2022  
X   
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ  
Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

15.03.2022  
(տալու  
ամսաթիվը)  
(date of issue)